

Եւ կեցեալ մերս տառապելութիւն ըստ այսմ իսկ եղանակի, որպէս գրեցաք, էհաս ի թիւն ՌՃՕԸ (= 1709): Եւ էր սովորութիւն ի հարցն առաջնոց մերս գաւազանի, զի ի ձմեռնային եղանակին շրջէին աշխատութեամբ քարոզել զբանս աստուածայինս, ուր կամէր եւ յաջողէր Հոգին Աստուած. եւ ի գարնանային հրոսակին դառնային անդրէն ի սուրբ Ուխտն:՝ Ըստ այսմ սովորութեան եւ մեր ի սոյն ամի (1709) անդրափոխեալ ի գնացս քայլեց զոտից մերոց ընթացս՝ դարձաք ի Սուրբ վանքն ի տեղեացն յորս շրջէաք, եւ պատահեալ եղբարց ի Մեծահրոյն Կիրակեան, կատարեցաք զսուրբ պատարագն եւ փառատրական գոհարանութիւնս մատուցաք միոյն Աստուծոյ, որ արժանի

1 Ս. Կարապետը, ձմրան մէջ, մանաւանդ Մեծ-Պահոց առթիւ նուիրակներ կը հանէ յոգն գրելու (արմտիք, իւզ, գառ եւ այլն) զորս երբ ժամանակը հասնի կը ժողովն: Այս առթիւ կը զրկուին վանքին մանաւանդ գործունեայ վարդապետները, որոնք կը քարոզեն շրջուն կերպով: Նուիրակներ իրենց հետ կը տանին վանքին սրբութիւններէն ալ խաչ կամ նշանաւոր աւետարան մը, մասունք կամ Ս. Կարապետի օջախ: Մշոյ իւրաքանչիւր վանքը իր յատուկ սրբութիւնը ունի, Մեծ-պահոց մէջ գեղարանքը զրկելու: Ասոնք Մշոյ քաղաքն ալ կու գան եւ հինգ եկեղեցիներու մէջ կիրակի կամ լուր օր ժողովուրդը գունդ գունդ կը դիմէ իւր ուխտան ընելու: Այս պաշտօնի համար Կուր Իջած էր իրենց գաւազանի (= իշխանութիւն, թեմ, վիճակ) ժողովրդեան մէջ 1709ին՝ իր պաշտօնը աւարտելով վանք վերադարձած էր Չատկէն ետքը, եւ Մեծահրոյն Կիրակեան (այսպէս կը կոչուի Չատկի Ի. Կիրակի կամ Երեւոյթ ծաղկաբոյր, որովհետեւ այդ կիրակին կ'երգուի Մեծահրոյն այս Երեւոյթ շարականը ի յիշատակ Ս. Գրիգոր լուսաւորչի վերապի կեանքին: Այդ կիրակին 1709ին՝ հանդիպեցաւ Յունիս ֆին, պատարագը Կորտ ըրաւ: Հազիւ պատարագէն ելած, եւ ճաշէն ետքը քիչ մը կը հանգստանային, տեղի կ'ունենայ սոսկալի երկրաշարժին ուղղութիւնը Երզնկայէն՝ արեւմուտքէն՝ Արեւելք եղած է: